ԿԱՐԾԻՔ

Տիգրան Ստեփանի Զաքարյանի «Ծովային ելք չունեցող երկրների տարանցիկ իրավունքների իրացումը միջազգային հարաբերություններում (ՀՀ օրինակով)» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Այն բարդ տարածաշրջանը, որտեղ գտնվում է Հայաստանի Հանրապետությունը, լի է բազմաթիվ խնդիրներով, որոնք բնականորեն ազդում են նաև լոգիստիկ հարցերի վրա: Հայաստանի պարագայում դա էլ ավելի է սրվում, քանի որ այն ոչ միայն չունի դեպի ծով ելք, այլև ծովային ելք ունեցող իր չորս հարևանների հետ ունի կամ բարդ հարաբերություններ, կամ տարբեր իրավիճակներում խոչընդոտներ հարուցելու դեպքերով հարաբերությունների պատմություն: Այս առումով ծովային ելք չունեցող երկրների համար նախատեսված միջազգային կարգավորումների ուսումնասիրությունը Հայաստանի պարագայում ունի ոչ միայն տեսական-գիտական, այլև պրակտիկ-քաղաքական նշանակություն:

Հիշյալ թեմայի ուսումնասիրությանն է նվիրված Տիգրան Զաքարյանի աշխատությունը, որն աչքի է ընկնում ընտրված թեմայի արդիականությամբ, կիրառական նշանակությամբ, գիտական նորույթով: Ատենախոսության մեջ ոչ միայն տրված է հարցի տեսական, միջազգային իրավական համապատկերը, այլև դատողություններ մեր օրերում տեղի ունեցող գործընթացներում այդ ամենի կիրառման հնարավորությունների վերաբերյալ:

Աշխատանքը իրականացվել է ինչպես տարալեզու գիտական ուսումնասիրությունների, այնպես էլ արխիվային, դիվանագիտական, միջպետական փաստաթղթերի, հռչակագրերի, պաշտոնական հայտարարությունների և մամուլի հրապարակումների հիման վրա:

Ատենախոսությունը բաղկացած է երեք գլխից, որից առաջինում ներկայացվում է ծովային ելք չունեցող երկրների իրավունքների իրավաքաղաքական հիմքերը, հատուկ ուշադրություն դարձնելով դրանցում քաղաքական գործոնին, որը հաճախ

դրսևորվում է խոչընդոտի կարգավիճակով: Երկրորդ գլխում քննության է առնվում Հայաստանի Հանրապետության դեպի ծով ելքի խնդիրը հարևաններից երեքի՝ Թուրքիայի, Վրաստանի և Իրանի հետ հարաբերությունների համատեքստում: Այս գլխի յուրաքանչյուր ենթագլխում ներկայացվում է կոնկրետ երկրի հետ հարաբերությունների այն օրակարգը, որը վերաբերում է խնդրո առարկա հարցին: Երրորդ գլուխը նվիրված է դեպի ծով ազատ ելքի խնդրին Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ, վեր են հանվում դրա առաջնահերթությունները, ինչպես նաև արվում կոնկրետ առաջարկներ, որոնք ունեն վերլուծական հիմք: Վերջում տրվում են եզրակացությունները, որոնք լիովին համահունչ են ընդհանուր աշխատության հետ և դրա տրամաբանական մասն են, ինչպես նաև ներկայացվում է հավելված խնդրո առարկա թեմային վերաբերող փաստաթղթերի, միջազգային պայմանագրերի մասին:

Հարկ ենք համարում շեշտել, որ աշխատանքն աչքի է ընկնում ինքնուրույնությամբ, արված վերլուծությունների կուռ տրամաբանությամբ և հաշվի առնելով հեղինակի՝ Տիգրան Զաքարյանի, գործող դիվանագետ լինելու հանգամանքը՝ թեմայի տեսական հիմնադրույթները երբեմն դիտարկվում են նաև պրակտիկ դիվանագիտության լույսի ներքո, ինչն ավելի համակողմանի և հետաքրքիր է դարձնում աշխատանքը: Ատենախոսության մեջ նկատվում են նաև շատ պրագմատիկ ու իրատեսական գնահատականներ, օրինակ՝ այն, որ միջազգային պայմանագրերի տված իրավունքներն ու հնարավորություններն, այնուամենայնիվ, բախվում են ծովային ելք ունեցող երկրների քաղաքական գերակայությունների, շահերի հետ և կարող են անտեսվել: Այսինքն՝ այդ երկրները կարող են ուղղակի մերժել ճանաչել ծովային ելք չունեցող պետությունների իրավունքները կամ թելադրել իրենց պայմանները: Հենց այդ հանգամանքն էլ ցայտուն դրսևորված է Հայաստանի և հարևան երեք երկրների հարաբերություններում. Թուրքիայի պարագայում ավելի ցայտուն, իսկ Վրաստանի ու Իրանի պարագայում՝ դիպվածային: Ուստի, Տիգրան Զաքարյանի ատենախոսութան մեջ նշված գիտական խնդիրը՝ ուսումնասիրել

ծովային ելք չունեցող երկրների տարանցիկ իրավունքների իրացման քաղաքական հիմքերը, առանձնացված է տրամաբանորեն:

Ատենախոսության մեջ, ինչպես ասվեց, խնդիրը դիտարկվում է նաև մերօրյա զարգացումների համապատկերում հատուկ ուշադրություն դարձնելով ներկայումս ընթացող հայ-թուրքական բանակցություններում սահմանված գերակայության՝ սահմանի բացման շրջանակներում, ծովային ելքից օգտվելու հարցի բարձրաձայնման կարևորությամբ: Կարող ենք փաստել, որ ատենախոսության համար ընտրված թեման, խնդրի սահմանումը, ժամանակագրական ընդգրկումը լիովին հիմնավորված են:

Ատենախոսությունը, սակայն, զերծ չէ որոշ թերություններից, որոնց հետ կապված ցանկանում ենք ներկայացնել մեր դիտարկումներն ու առաջարկները.

1. Ատենախոսը ներածության մեջ նշում է, որ ուսումնասիրության ժամանակագրական սահմանները ընդգրկում են 1991-ից մինչև մեր օրերն ընկած տարիները, սակայն կոնկրետ Հայաստան-Թուրքիա հարաբերություններին, բանակցությունների պատմությանը արված է հպանցիկ անդրադարձ և դուրս են մնացել այդ հարաբերությունների կարևոր փուլերի ոչ միայն խորքային նկարագրություններ, այլև անգամ հիշատակումներ: Մինչդեռ այդ ամբողջ ընթացքի մանրամասն ներկայացումն ավելի ամբողջական պատկեր կստեղծեր այդ թվում և քննարկվող հիմնական հարցի՝ դեպ ծով ելքի իրավունքի տեսանկյունից:

2. Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկը թերի է և դրանում տեղ չեն գտել հայ-թուրքական հարաբերությունների, բանակցությունների պատմության մասին տարբեր աշխատություններ, որոնք խնդրո առարկա թեմայի շրջանակներում ունեն ընդգծված կարևորություն: Խուսափելով թուրք և օտարազգի այլ հեղինակների աշխատությունների թվարկումից՝ նշենք հայ մի քանի հեղինակների ուսումնասիրություններ, որոնք տեղ չեն գտել ատենախոսության գրականության ցանկում. Սաֆրաստյան Ռ., Լիպարիտյան Ժ., Տեր-Մաթևոսյան Վ., Իսրայելյան Ա.: Ատենախոսությունը կշահեր, եթե օգտագործվեին նաև հայ-թուրքական հարաբերությունների դերակատար տարբեր պաշտոնյաների հարցազրույցներ,

հուշագրություններ, օրագրեր. օրինակ՝ Լ. Տեր-Պետրոսյանի, Ռ. Քոչարյանի, Ս. Սարգսյանի, Վ. Օսկանյանի, Է. Նալբանդյանի և այլոց: Բացի այդ, շատ են հղումները մամուլի հրապարակումների, լրատվական կայքերի, օրվա լրահոսի վրա մինչդեռ կարելի էր դրանց չափաբաժինը կրճատել և ավելացնել ակադեմիական վերլուծությունները: Տարանցիկ ուղիների մասին խոսելիս՝ ատենախոսն անդրադառնում է նաև, այսպես կոչված, Զանգեզուրի միջանցքի խնդրին, բայց այդ մասին հայալեզու միակ ամբողջական աշխատանքին (Մելքոնյան Ռ., Գեղամյան Վ.) նույնպես անդրադարձ և հիշատակում չկա:

3. Խոսելով Թուրքիայի կողմից Հայաստանին ներկայացվող նախապայմանների մասին /էջ 41/՝ չի նշվում Արցախի հարցը որպես հստակ թուրքական նախապայման, չնայած որ հետագա էջերում այդ մասին կան անդրադարձներ /էջ 45/: Խոսելով 2020 թ. Բաքվում, զորահանդեսի ժամանակ Էրդողանի ելույթի մասին՝ նշվում է միայն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը դադարեցնելու նրա պահանջի մասին (չնայած դա արդեն իսկ գրեթե չկար պետական մակարդակով սկսած 2018-ից) և չի ներկայացվում այդ ելույթի այլ կարևոր շեշտադրումներ, որոնք քննվող թեմայի տեսանկյունից կարող են ավելի մեծ կարևորություն ունենալ:

4. Աշխատանքում կան որոշ փաստական սխալներ, ինչպես նաև ոճական և ձևակերպումների վրիպումներ: Մասնավորապես՝ Հեյդար Ալիևը ներկայացվում է որպես Ադրբեջանի առաջին նախագահ /էջ 43/, մինչդեռ նա առաջին նախագահը չէր: Աշխատանքում կիրառվում է պարսիկ եզրույթը /էջ 11/, մինչդեռ ճիշտ կլիներ գրել իրանցի: Էջ 24-ում ակնհայտ ռուսաբանություն է «խոսքը գնում է» երկու անգամ հանդիպող ձևակերպումը:

Նշված դիտողությունները, սակայն, էականորեն չեն ազդում աշխատանքի ընդհանուր բնույթի վրա. այն իրականացված է գիտական պատշաճ մակարդակով, համակարգված է, ունի կուռ տրամաբանություն, արդիական է և պարունակում է գիտական նորույթ: Թեմայի վերաբերյալ ատենախոսի հրապարակված հոդվածները և

սեղմագիրը արտացոլում են աշխատանքի դրույթները: Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳ կոմիտեի պահանջներին, իսկ ատենախոսը՝ Տիգրան Ստեփանի Զաքարյանը արժանի է իր հայցած քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի՝ ԻԳ.00.04 «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ռուբեն Հովհաննեսի Մելքոնյան

12.01.2026 թ.

Ռուբեն Մելքոնյանի ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊՀ գիտքարտուղար՝ բ.գ.թ., դոցենտ Մ. Հովհաննիսյան